Արձանագրություն N 2

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/143» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

16.07.2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Թ. Երկանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հովակիմյան, Ե. Մաթևոսյան, Ս. Ներսիսյան, Մ. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/143» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Թ. Երկանյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ **2019 թվականի հուլիսի 16-ին, ժամը 11:00-ին,** Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտիի 1 հասցեում:
Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/143» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Թ. Երկանյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«Վեգա Ուորլդ» ՍՊԸ
2	«Բարսիս» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Թ. Երկանյան)

3.1 Գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գներ /ՀՀ դրամ/	Մասնակիցների անվանումները	
			«Վեգա Ուորլդ» ՍՊԸ	«Բարսիս» ՍՊԸ
			ԱԱՀ-ով	ԱԱՀ-ով
2	Օդորակիչ (Կենտրոն վրչ. շրջ.)	**875000**	840000	----------
3	Օդորակիչ (Կենտրոն վրչ. շրջ.)	**159000**	159000	156000

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Թ. Երկանյան)

4.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.2 Գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց՝ 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից իսկ 3-րդ չափաբաժնի մասով՝ «Բարսիս» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում և որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցելու մասին

(Թ. Երկանյան)

5.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 17.07.2019թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

5.2 ***17.07.2019թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:***

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

6. Ընթացակրգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

(Թ. Երկանյան)

- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

-Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Թ. Երկանյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության ստացման հաջորդ օրը ժամը 11:45-ին Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Թ. Երկանյան

Անդամներ՝ Ա. Հովակիմյան

Ս. Ներսիսյան

Ե. Մաթևոսյան

Մ. Խաչատրյան

Համակարգող՝ Մ. Եղիազարյան